<<ԽԱՉ-ԱՐՄ>> ՍՊԸ-ի տնօրենին
ՀՎՀՀ 02294286
Հասցե՝ ք. Երևան, Ն. Չարբախ 11փ, փ2

ՀՀ Կոտայքի մարզի Նոր Հաճընի համայնքապետարանի և <<ԽԱՉ-ԱՐՄ>> ՍՊԸ-ի միջև 24.06.2022թ-ին կնքված ԿՄՆՀՀ ԳՀԱՇՁԲ22/11 ծածկագրով գնման պայմանագրի համաձայն, վերջինս պարտավորվել էր կատարել 5 571 572 (հինգ միլիոն հինգ հարյուր յոթանասունմեկ հազար հինգ հարյուր յոթանասուներկու) ՀՀ դրամի չափով աշխատանքներ, սակայն 24.10.2022թ. դրությամբ 5 318 177 (հինգ միլիոն երեք հարյուր տասնութ հազար մեկ հարյուր յոթանասունյոթ) ՀՀ դրամի չափով աշխատանքները չեն կատարվել:

Հիմք ընդունելով Պայմանագրի 3.1.4 կետի «ա» և «բ» ենթակետերը՝ Նոր Հաճընի համայնքապետարանը 24.10.2022թ.-ին միակողմանի լուծում է պայմանագիրը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու դեպքում պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Տեղեկացնում ենք, որ <<ԽԱՉ-ԱՐՄ>> ՍՊԸ-ն պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց հետո 10 (տաս) բանկային օրվա ընթացքում Նոր Հաճընի համայնքապետարանի կոմից բացված գանձապետական 900115102056 հաշվեհամարին փոխանցել 162 736 (մեկ հարյուր վաթսուներկու հազար յոթ հարյուր երեսունվեց) ՀՀ դրամ՝ որպես տույժ՝ պայմանագրի 6.2 կետի համաձայն և 167147 (մեկ հարյուր վաթսունյոթ հազար մեկ հարյուր քառասունյոթ) ՀՀ դրամ՝ որպես տուգանք Պայմանագրի 6.3 կետի համաձայն:

Ինչպես նաև ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված Նոր Հաճընի համայնքապետարանի գանձապետական 900115102056 հաշվեհամարին ենթակա է գանձման 557 158 (հինգ հարյուր հիսունյոթ հազար մեկ հարյուր հիսունութ) ՀՀ դրամ, որպես տուժանք՝ պայմանագրի կատարման ապահովում և 835 736 (ութ հարյուր երեսունհինգ հազար յոթ հարյուր երեսունվեց) ՀՀ դրամ, որակավորման ապահովում:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ եթե մինչև 2022թ. նոյեմբերի 7-ը ներառյալ Ձեր կողմից վճարվի պայմանագրի կատարման ապահովման գումարը, ապա <<ԽԱՉ-ԱՐՄ>> ՍՊԸ-ն չի ներառվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Նշված գումարը անհրաժեշտ է վճարել Կենտրոնական գանձապետարանում լիազորված մարմնի անվամբ բացված վերը նշված գանձապետական հաշիվներին և վճարված կտրոնի բնօրինակները ներկայացնել Նոր Հաճընի համայնքապետարան, 2-րդ հարկ, 5 սենյակ:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒԻ ՂԵԿԱՎԱՐ